



Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում ընդգրկվել է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը¹ (այսուհետ՝ Նախագիծ):

2018 թվականի ապրիլի 12-ին Նախագիծը ընդունվել է առաջին ընթերցմամբ, սակայն համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հիմնական զեկուցողի բացակայության պատճառով օրենքների նախագծերի փաթեթի քննարկումը Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում հետաձգվել է:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ ներակայացնում է իր դիրքորոշումը Նախագծով առաջարկվող կարգավորումների վերաբերյալ:

¹ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9818&Reading=1>



Նախագծով առաջարկվում է «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «և կենցաղային» բառերը փոխարինել «կենցաղային և սահմանափակման ենթակա» բառերով:

Նախագծի համաձայն՝ Օրենքը լրացվում է նոր բովանդակությամբ 4.2 գլխով՝ Սահմանափակման ենթակա ծառայություններ: Նախատեսվում է, որ սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները՝ կարաոկեն, դիսկոտեկը, հեստապարային ակումբը, սաունան, բաղնիքը և շոգեբաղնիքը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում տեղակայելն արգելվում է:

Հարկ է ընդգծել, որ ներկայացված փոփոխությունը ողջունելի է, սակայն այնուամենայնիվ դրանով ամբողջական լուծում չի տրվում բնակելի տարածքներում սպասարկման և առևտրային օբյեկտների շահագործման արդյունքում առաջացող խնդիրների լուծմանը:

Նախագծում սահմանափակման ենթակա օբյեկտների ցանկը սպառիչ ձևով է ներկայացված: Ստացվում է, որ Նախագծով չնախատեսված ժամանցի և հանգստի անցկացման այլ օբյեկտների գործունեությունը, որտեղ կարող է հնչել բարձր աղմուկով երաժշտություն՝ առանց որևէ բացառության կամ հատուկ կարգավորման շարունակելու է թույլատրելի համարվել բազմաբնակարան շենքում:

Ակնհայտ է, որ առաջարկվող օրենսդրական փոփոխությունները ոչ ամբողջական են լուծում բազմաբնակարան բնակելի շենքերում զվարճանքի (ժամանցի) օբյեկտների տեղակայման և դրանց գործունեության հետևանքով բնակիչների իրավունքների ապահովման ոլորտում առկա խնդիրները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ ՀԿ կողմից դեռևս 2013 թվականի նոյեմբերից իրականացվում է Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 31-րդ շենքում բնակվող մի ընտանիքի իրավունքների պաշտպանություն: Ընտանիքը բնակվում է բնակելի շենքի 2-րդ հարկում: Ընտանիքը բողոքում էր բազմաբնակարան շենքի առաջին հարկում գործող «Կամելոտ» ռեստորանի գործունեությունից, որտեղ հնչում էր երաժշտություն, իսկ երեկոյան ժամերին՝ նաև կենդանի երաժշտություն: «Կամելոտ» ռեստորանը հաճախ աշխատում էր նաև գիշերային ժամերին: Բազմաթիվ դիմումների և բողոքների արդյունքում «Կամելոտ» ռեստորանում ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական պետական տեսչության Երևանի քաղաքային կենտրոնում հարուցված վարչական վարույթի շրջանակներում կատարվել են գործիքային չափումներ, որոնց արդյունքում արձանագրված



սանիտարական նորմերի խախտումների արդյունքում ռեստորանի տնօրինությունը երկու անգամ ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն: Բացի այդ, մի քանի անգամ ռեստորանի տնօրինությունը վարչական պատասխանատվության է ենթարկվել նաև ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված իրավախախտման հատկանիշներով: Հետագայում նույն ռեստորանի տարածքում գործում էր մանկական սրճարան, որի գործունեությունը դադարելուց հետո սկսեց գործել «Սպորտ Փաբը», որը հաճախ աշխատում էր նաև 24:00-ից հետո՝ սպասարկելով այնտեղ գտնվող սպորտային խաղերին հետևող հաճախորդներին, այդպիսով՝ խաթարելով բնակիչների անդորրը: «Սպորտ Փաբի» կողմից գիշերային ժամերին լուրջությունը խախտելու և առանց թույլտվության 24:00-ից հետո աշխատելու դեպքերի առթիվ դիմումներ են ներկայացվել Երևանի քաղաքապետարան, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին: Ամիսներ անց դադարեց նաև «Սպորտ Փաբի» գործունեությունը, իսկ այնուհետև, նույն տարածքում սկսեց ծառայություններ մատուցել «Ռեգալ» ռեստորանը, որտեղ կրկին հնչում էր երաժշտություն: Ընտանիքի անդամները բազմիցս ահազանգել են ՀՀ ոստիկանություն՝ հայտնելով ռեստորանի կողմից գիշերային ժամերին լուրջությունը խախտելու մասին, սակայն, նրանց ահազանգերը հիմնականում պատշաճ քննության չէին արժանանում: 2017 թվականի ամռանից Երևան քաղաքի Մ. Մաշտոցի պողոտայի 31-րդ շենքում առկա ժամանցի վայրի գործունեության տեսակը փոխվել է և այնտեղ սկսել է գործել չինական ռեստորան:

Գործի փաստական հանգամանքները մատնանշում են, որ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչների անդորրը կարող են խաթարել ոչ միայն նախագծով նախատեսված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներն, այլ նաև՝ գործունեություն ծավալող այնպիսի օբյեկտները, որտեղ հնչում է բարձր երաժշտություն, որոնք աշխատում են նաև 23:00-ից հետո կամ դրանց գործունեությունը պատճառ է հանդիսանում աղմուկի առաջացման համար:

Գտնում ենք, որ առկա է անհրաժեշտություն առևտրի և ծառայությունների ոլորտում առկա խնդիրներին տալ համակարգային լուծում: Անհրաժեշտ է սահմանել բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, ինչպես նաև կրթական, պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում զվարճանքի (ժամանցի) բոլոր օբյեկտներին, այդ թվում՝ ռեստորաններին, սրճարաններին, սպորտային ակումբներին ներկայացվող պահանջներն, այն է՝



1. դրանց գործունեությունից առաջացող աղմուկի թույլատրելի առավելագույն մակարդակի սահմանում՝ ցերեկային և գիշերային ժամերի համար;
2. բազմաբնակարան շենքում, կամ բազմաբնակարան շենքի, բնակելի տների, կրթական, մշակութային և առողջապահական օբյեկտների հարևանությամբ գործունեություն ծավալելու թույլտվություն;
3. շահագործման թույլտվության տրամադրում բացառապես ձայնամեկուսիչ համակարգի առկայության պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք.

1. նախագիծը լրամշակել և սահմանել բազմաբնակարան շենքում, կամ բազմաբնակարան շենքի, բնակելի տների, կրթական, մշակութային և առողջապահական օբյեկտների հարևանությամբ գործող օբյեկտների գործունեությունից առաջացող աղմուկի թույլատրելի առավելագույն մակարդակ (թույլատրելի շեմի և չափման կարգը կարելի է քննարկել ոլորտի մասնագետների հետ);
2. սահմանել, որ բազմաբնակարան շենքում, կամ բազմաբնակարան շենքի, բնակելի տների, կրթական, մշակութային և առողջապահական օբյեկտների հարևանությամբ գործունեություն ծավալելու համար պետք է տրամադրվի թույլտվություն (թույլտվության տրամադրման կարգը սահմանել ՀՀ կառավարության որոշմամբ);
3. սահմանել, որ շահագործման թույլտվություն կարող է տրամադրվել բացառապես այն դեպքերում՝ երբ թույլտվություն հայցող օբյեկտը պարտավորվում է տեղադրել կամ տեղադրված է ձայնամեկուսիչ համակարգ, որոնք կերաշխավորեն թույլտվություն հայցող օբյեկտի անաղմուկ աշխատանքը և կապահովեն բնակելի շենքում բնակվող անձանց իրավունքների պաշտպանությունը: